

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն հ.11

ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի
գիտական խորհրդի 31.01.2017թ. նիստի

Օ Ր Ա Կ Ա Ր Գ`

1. Լավագույն ուսանողներին անվանական կրթաթոշակի ներկայացման հարցը:
2. Ասպիրանտների թեկնածուական ատենախոսությունների թեմաների, գիտական ղեկավարների հաստատման հարցը:
3. Ընթացիկ հարցեր:
Գիտական խորհրդի 44 անդամներից ներկա էին 24-ը:

1. Լսեցին - 2016-17 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում ֆակուլտետի ուսանողներին անվանական կրթաթոշակի ներկայացման հարցը:

Որոշեցին - Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի հետևյալ ուսանողներին ներկայացնել անվանական կրթաթոշակի.

1. Ակադեմիկոս Արտաշես Շահինյանի անվ. կրթաթոշակ
Ավետիսյան Արա Անդրանիկի - ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա, բակալավրիատ 4-րդ կուրս
2. Ակադեմիկոս Միխիթար Զրբաշյանի անվ. կրթաթոշակ
Միքայելյան Վազգեն Գագիկի - մաթեմատիկա, բակալավրիատ 4-րդ կուրս
3. Ակադեմիկոս Նագուշ Հարությունյանի անվ. կրթաթոշակ
Նահապետյան Սևակ Թաթուլի - մեխանիկա, մագիստրատուրա 1-ին կուրս

2.Լսեցին - Ասպիրանտների թեկնածուական ատենախոսությունների թեմաների, գիտական ղեկավարների հաստատման հարցը:

Որոշեցին – Հաստատել ասպիրանտներ.

1. Վիկտորյա Սարգսի Բաբաջանյանի թեկնածուական ատենախոսության թեման` «Բաց տնտեսության դինամիկ ստոխաստիկ ընդհանուր հավասարակշռության մոդելի կառուցումը Հայաստանի

օրինակով», Ը.00.08.–մաթեմատիկական տնտեսագիտություն մասնագիտությամբ, գիտական ղեկավար՝ տնտ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վ. Հ. Թորոյան:

2. Հակոբ Գառնիկի Իսրայելյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «Անընդհատ և խիստ մոնոտոն մեղիալ գործողություններ», Ա.01.06. – հանրահաշիվ և թվերի տեսություն մասնագիտությամբ, գիտական ղեկավար հաստատել ֆիզ. մաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Յու. Ա. Մովսիսյանին:

3.Լսեցին – Թեկնածուական ատենախոսությունների գիտական ղեկավարներ հաստատելու համար ՀՀ ԲՈՀ-ին միջնորդելու հարցը:

Որոշեցին - Միջնորդել ՀՀ ԲՈՀ-ին ֆիզ. մաթ. գիտ. թեկնածու, դոցենտ Սմբատ Գրիգորի Շահինյանին թույլատրել ղեկավարելու Ա.02.01. – տեսական մեխանիկա մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսություններ:

Խորհրդի նախագահ

Ա.Ա.Սահակյան

Գիտքարտուղար

Ս.Հ.Զիլավյան